Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 23-06-2025 թ. որոշմամբ
«ՍՏԵՓԱՆ ԳԻՇՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՍՏԵՓԱՆ ԳԻՇՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԳԱՅԻ ՊՈՂ. ԹԻՎ 16/46
1.3 Պետական գրանցման համարը		222.160.876196
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2015-10-23
1.5 ՀՎՀՀ-ն		02643306
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93903311
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://foundation-gishyan.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		foundation.gishyan@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Աննա Գիշյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	2	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հիմնադրամի ԱԿԲԱ բանկում առկա ընթացիկ հաշվի մնացորդի նկատմամբ տոկոսի ստացում	20,257
	Հիմնադրամի կողմից ԱԿԲԱ բանկում ներդրված ավանդից ստացված գումար	43,390,493
	Լոֆթ ՍՊԸ-ին նվիրաբերած գումարի վերադարձ	3,662,400

	Ֆոլդինկ ՍՊԸ-ին նվիրաբերած գումարի վերադարձ	1,500,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Մուտք ֆիզիկական անձից	1,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Նարինե Ալեքսանյանի կողմից հիմնադրամին կատարված նվիրաբերություն	50,000
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ՖՈԼԴԻՆԿ ՍՊԸ, "Ամառային գիտական դպրոց" ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութերի, ռեագենտների, փորձանոթների և այլ անհրաժեշտ իրերի ձեռքբերում: Ծրագիրը իրականացվելու է ուսանողների, երիտասարդ գիտնականների և հետաքրքրված այլ անձանց համար	4,970,000	
«ԼՈՖԹ» կրթության, մշակույթի և երիտասարդության զարգացման համահայկական ՀԿ, «Լոֆթ-Մեղրի» երիտասարդական կենտրոնում աերոտիեզերական կրթության լաբորատորիայի համար 1U CubeSat Փոքր արբանյակի կրթական հավաքածուի (Cubesat Education Kit) ձեռքբերում	3,662,400	
Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամ, ՀՀ Արագածոտնի մարզի «Մաստարայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆրանսերեն լեզվի դասասենյակի համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում	2,810,000	
«ԱՐՎԵՍՏԱՐԱՆ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԿ, «Արվեստարանի լոշիկ» սոցիալական ձեռնարկատ. ծրագրի իրականացման համար՝ գործիքների և իրերի ձեռքբերում՝ առուտիզմ ունեցող 18 տարեկ. բարձր երիտասարդներին աշխատանքով, շփման-հաղորդակցման միջավայրով, ինչպես նաև կարողությունները և հմտությունները զարգացնելու նպատակով	1,493,000	

12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	24,345,335
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	12,935,400

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 24 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն Digitally signed by GISHYAN ANNA 6010840090
Date: 2025.06.25 16:15:00 AMT

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՍՏԵՓԱՆ ԳԻՇՅԱՆ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 8

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 10

ՀՀ, Երևան 0014, Պ.Սևակ 8; Հեռ.՝ (374 11) 60 70 81; info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի (Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2024թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամի դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

30 ապրիլի, 2025թ.
ք.Երևան, Պ.Սևակի 8

'000 դրամ	*Ծանոթ.*	*31/12/24*	*31/12/23*
Ակտիվ			
Ոչ նյութական ակտիվներ		295	93
Ամորտիզացված արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	9	-	405,632
Հետաձգված հարկային ակտիվներ	17	289	267
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***584***	***405,992***
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	10	4,967	1,950
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ		7	3
Դրամական միջոցներ	8	522	2,243
Ամորտիզացված արժեքով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ	9	440,573	12,935
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***446,069***	***17,131***
Ընդամենը ակտիվներ		***446,653***	***423,123***
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Չբաշխված շահույթ	11	237,210	208,502
Ընդամենը սեփական կապիտալ		***237,210***	***208,502***
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	183,064	194,592
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***183,064***	***194,592***
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային պարտավորություն		6,594	7,079
Աշխատավարձի և այլ կարճ. հատուց-ի գծով պարտ-ություններ		16	15
Եկամուտներին վերաբերող շնորհներ	12	19,769	12,935
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***26,379***	***20,029***
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		***446,653***	***423,123***

Տնօրեն Աննա Գիշյան

Գլխավոր հաշվապահ Վահան Աբրահամյան

10-21 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	*Ծանոթ.*	*2024*	*2023*
Դրամաշնորհներից եկամուտ	13	4,744	19,407
Դրամաշնորհներից ծախս	13	(4,744)	(19,407)
Իրացման ծախսեր		(12)	(12)
Վարչական ծախսեր	14	(3,272)	(3,256)
Այլ եկամուտներ և ծախսեր	15	(973)	(1,045)
Ֆինանսական եկամուտներ	16	39,537	41,536
Շահույթ մինչև հարկումը		**35,280**	**37,223**
Շահութահարկի գծով ծախս	17	(6,572)	(7,049)
Զուտ շահույթ		28,708	30,174
Համապարփակ ֆինանսական արդյունքների հանրագումար		28,708	30,174

Տնօրեն Աննա Գիշյան

Գլխավոր հաշվապահ Վահան Աբրահամյան

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 02043306

10-21 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	*Ծանոթ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	11	178,328	178,328
Զուտ շահույթ		30,174	30,174
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների հանրագումար՝ առանց հարկերի		*30,174*	*30,174*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.		208,502	208,502
Զուտ շահույթ		28,708	28,708
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների հանրագումար՝ առանց հարկերի		*28,708*	*28,708*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.		237,210	237,210

Տնօրեն Աննա Գիշյան

Գլխավոր հաշվապահ Վահան Աբրահամյան

10-21 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	Ծանոթ.	2024	2023
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
ստացված դրամաշնորհներից	12,13	50	-
այլ ներհոսքերից		5,163	17
աշխատանքների, ծառայությունների ձեռք բերումից		(1,040)	(786)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից		(3,287)	(3,274)
շահութահարկի վճարումից		(7,083)	(6,305)
նվիրաբերությունից		(12,935)	(16,300)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր		***(19,132)***	***(26,648)***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
տոկոսների ստացումից	9	43,411	37,692
ավանդների մարումից	9	391,000	375,000
ավանդների ներդրումից	9	(417,000)	(386,000)
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր		***17,411***	***26,692***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր		-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		(1,721)	44
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի		2,243	2,199
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի		522	2,243

Տնօրեն Աննա Գիշյան

Գլխավոր հաշվապահ Վահան Աբրահամյան

10-21 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նկարագիր և գործունեություն

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2015թ. հոկտեմբերի 23-ին, ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ (ներկայումս ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ)-ի, Ֆրանսիական ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ էսէյ բանկի, ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Ազգային ֆեդերացիայի և Սամսոն Գիշյանի կողմից:
Հիմնադրամի հիմնական նպատակն է նպաստել հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացմանը, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտական, կրթական, մշակութային և առողջապահական համակարգերի զարգացմանը:
Աշխատակիցների ցուցակային թվաքանակը 2024թ. 2 անձ է և 2023թ.՝ 2:
Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Նոր Նորք, Գայի պող. 16/46, որտեղ տեղակայված է Հիմնադրամի վարչական գրասենյակը:
Հիմնադրամի հիմնադիրներն են ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ (ներկայումս ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ), Ֆրանսիական ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ էսէյ բանկը, ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Ազգային ֆեդերացիան և Սամսոն Գիշյանը:

1.2. Կառուցվածք և կառավարում

Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որն ունի Հիմնադրամի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները հինգն են՝ Հակոբ Անդրեասյան (հոգաբարձուների խորհրդի նախագահ), Ստյոպա Զաքինյան, Թոմաս Գրոհ, Ֆիլիպ Լեոնարդ, Հրայր Ասլանյան:
Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

2. ՖՀՄՍ-ներին համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:
Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

4.1. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական ակտիվների, որոնք չափվում են իրական արժեքով:

4.2. Պաշարներ

Սկզբնական չափում. Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:
Ինքնարժեքի բանաձևեր. Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:
Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջին մուտք՝ առաջին ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:
Հետագա չափում. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.3. Ֆինանսական ակտիվներ

Ճանաչում. Հիմնադրամը ֆինանսական ակտիվը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչում. Հիմնադրամը ֆինանսական ակտիվը ապաճանաչում է, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:
Դասակարգումը և սկզբնական չափումը. Ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները:
Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող: Դասակարգումը բնորոշվում է Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելով և ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշներով:
Հետագա չափումը. Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված իրական արժեքով չափվող՝ շահույթ կամ վնասի միջոցով)

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամրտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը:
Արժեզրկում. Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվությունը՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: Պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվություն անցյալ իրադարձությունների, ընթացիկ պայմանների, կանխատեսումների վերաբերյալ, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի հավաքագրելիության վրա:
Առաջընթացի գնահատման մոտեցումը կիրառելիս դիտարկվում է Փուլ 1-ը՝ ֆինանսական ակտիվներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն խեղաթյուրվել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ, Փուլ 2-ը՝ ֆինանսական ակտիվներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն խեղաթյուրվել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ, Փուլ 3-ը՝ ֆինանսական ակտիվներ, որոնց գծով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները:
Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Հիմնադրամի դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

4.4. Ֆինանսական պարտավորություններ

Ճանաչում. Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:
Ապաճանաչում. Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:
Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Դասակարգում. Ֆինանսական պարտավորության կատեգորիաներն են՝

- ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- այլ ֆինանսական պարտավորություններ:

4.5. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Հիմնադրամը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Ընդ որում այդ հաշվարկներում ներառվում է նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասը:

4.6. Եկամուտներ

Հիմնադրամի եկամուտները գոյանում են ժամկետային ավանդների տոկոսներից և շնորհներից:
Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը:

4.7. Շնորհներ

Ճանաչում. Շնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը բավարարելու է դրանց կցված պայմանները և շնորհները ստացվելու են:

Ներկայացում. Շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են՝ որպես հետաձգված եկամուտ:

Հաշվառում. Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Վերադարձում. Շնորհը, որը դառնում է վերադարձման ենթակա, հաշվառվում է՝ որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն: Շնորհի վերադարձումը առաջին հերթին կատարվում է տվյալ շնորհի գծով չամորտիզացված հետաձգված կրեդիտային մնացորդի հաշվին: Այնքանով, որքանով վերադարձումը գերազանցում է այդպիսի հետաձգված կրեդիտային մնացորդը, կամ երբ հետաձգված կրեդիտային մնացորդ գոյություն չունի, վերադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

4.8. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ֆունկցիոնալ արժույթ. Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս Հիմնադրամը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթը՝

որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են), և

-այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը <<դրամն է:

Սկզբնական ճանաչում. Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ ստիպ փոխանակման փոխարժեքը:

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչումը. Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

4.9. Շահութահարկ

Ընթացիկ հարկ. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ. Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Հիմնադրամը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն գեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Հիմնադրամը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում. Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հիմնադրամը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Հաշվանցում. Հիմնադրամը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝
բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:
Հիմնադրամը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝
ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝
բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝
I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝
II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

4.10. Սխալներ

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝
ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ
բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

4.11. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝
ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ
բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:
Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:
Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

4.12. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Հիմնադրամը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝
ա) պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով, կամ
բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:
Եթե Հիմնադրամը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը,

որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին: Այնուամենայնիվ, ճշգրտումը կարող է վերագրվել սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչի (օրինակ՝ մեկ այլ ՖՀՄՍ-ի պահանջները բավարարելու նպատակով):
Երբ Հիմնադրամի համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Հիմնադրամը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Հիմնադրամը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

4.13. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հիմնադրամը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:
Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:
Անընդհատության սկզբունք. Ղեկավարությունը պատրաստել է սույն ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, գործառնությունների շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև Հիմնադրամի ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

Փոխկապակցված անձանց հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Հիմնադրամը ունենում է գործարքներ իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9 պահանջում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչում՝ հիմնվելով իրենց իրական արժեքների վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ առկա չէ ակտիվ շուկա նման գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում. Ակնկալվող պարտքային կորուստների չափումը կարևոր գնահատում է, որը իրականացվում է մեթոդաբանության, մոդելների և բազային տվյալների օգտագործմամբ: Հետևյալ բաղադրիչները զգալի ազդեցություն ունեն պարտքային կորուստների գնահատված պահուստի վրա՝ դեֆոլտի որոշումը, պարտքային ռիսկի էական աճը, դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ենթարկվածությունը ռիսկին և դեֆոլտի դեպքում կորստի գումարը, ինչպես նաև մակրոտնտեսական սցենարների մոդելները:

Պարտքային ռիսկի էական աճ. Պարտքային ռիսկի էական աճի փաստման համար Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի ժամկետի ընթացքում դեֆոլտի սկսվելու ռիսկը համեմատում է սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դեֆոլտի սկսվելու ռիսկի հետ: Գնահատման գործընթացը դիտարկում է պարտքային ռիսկի հարաբերական աճը, այլ ոչ թե հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկի կոնկրետ մակարդակը:

6. Նոր և փոփոխված ՖՀՄՍ-ներ

Ստորև ներկայացված նոր ստանդարտները և ստանդարտների փոփոխությունները գործում են 2024թ. հունվարի

1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ղեկավարության գնահատմամբ հետևյալ փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել իր ֆինանսական վիճակի կամ գործունեության արդյունքների վրա.

- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ,
- Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում. Վարձակալության պարտավորություն վաճառքի և վերադարձի դեպքում,
- Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում. Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ:

7. Դեռևս չկիրառվող նոր և փոփոխված ՖՀՄՍ-ներ

Մի շարք ստանդարտների փոփոխություններ չէին գործում 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն ունենան Հիմնադրամի ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Հիմնադրամը մտադիր է կիրառել այդ փոփոխությունները ուժի մեջ մտնելու օրվանից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

- Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում. Փոխանակելիության բացակայություն,
- Փոփոխություններ ՖՀՄՍ 18-ում. Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտումներ:

8. Դրամական միջոցներ

'000 դրամ

	Մնացորդ 31.12.2024թ.	*Մնացորդ 31.12.2023թ.*
Ընդամենը, այդ թվում՝	522	**2,243**
• բանկում՝ արժույթով	522	2,243

9. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

'000 դրամ

	Մնացորդ 31.12.2024թ.	*Մնացորդ 31.12.2023թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**440,573**	**418,567**
• ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		405,632
• ընթացիկ ֆինանսական ակտիվներ	440,573	12,935

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ժամկետային ավանդներ են, որոնք տեղաբաշխվել են կապակցված կողմ հանդիսացող հայկական բանկում (ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ): Տեղաբաշխումները կատարվել են 2015թ.-ին՝ դրամաշնորհային միջոցների հաշվին: Առ 31.12.2024թ. դրությամբ 406,000 հազար ՀՀ դրամ ժամկետային ավանդների տարեկան տոկոսադրույքը սահմանված է 9.5%, և 6,000 հազար ՀՀ դրամինը՝ 4%:

Դրամաշնորհի պայմանների համաձայն և սահմանված քաղաքականությամբ՝ ավանդները ներդրվում են մեկ տարի ժամկետով, այնուհետև մարման ժամկետը լրանալուց հետո ավանդի փոքր մասը, ինչպես նաև ստացված տոկսագումարները ծախսվում են շնորհի պայմաններին համապատասխան, իսկ մեծ մասը կրկին վերատեղաբաշխվում է: Ֆինանսական ակտիվների ընթացիկ մասում ճանաչվում է մինչև հաջորդ տարեվերջը շնորհային նպատակներով օգտագործվող (ծախսվող) գումարը:

Ավանդները ժամկետանց ու արժեզրկված չեն, Փուլ 1-ի ֆինանսական ակտիվներ են (որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն խեղաթյուրվել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ): Ակնկալվող պարտքային կորուստների պահուստը 31.12.2024թ. գնահատվել է 1,590 հազար դրամ (31.12.2023թ.-ին՝ 1,470 հազար դրամ):

10. Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար

'000 դրամ	Մնացորդ 31.12.2023թ	Ավելացում	Նվազեցում	Մնացորդ 31.12.2024թ
Ընդամենը, այդ թվում՝	1,950	13,235	(10,218)	4,967
- դրամաշնորհների գծով	1,894	12,935	(9,906)	4,923
- ծառայությունների գծով	56	300	(312)	44

11. Սեփական կապիտալ

«Չբաշխված շահույթ» հոդվածի 31.12.2024թ. մնացորդը ներառում է նախորդ տարիների չբաշխված շահույթը՝ 208,502 հազար դրամ, և հաշվետու տարվա զուտ շահույթը՝ 28,708 հազար դրամ:

12. Շնորհներ

'000 դրամ	Մնացորդ 31.12.2023թ	Ավելացում	Նվազեցում	Մնացորդ 31.12.2024թ
Ընդամենը, այդ թվում՝	207,527	11,578	(16,272)	202,833
- ակտիվներին վերաբերող շնորհներ	194,592	-	(11,528)	183,064
- եկամուտներին վերաբերող շնորհներ	12,935	11,578	(4,744)	19,769

Շնորհները ստացված են հիմնադիրների և այլ շնորհատուների կողմից, հիմնականում դրամական միջոցների տեսքով, որոնք ներդրվել են որպես ավանդ (ծանոթ.9): Եկամուտներին վերաբերող շնորհներում ճանաչվում է մինչև հաջորդ տարեվերջը շնորհային նպատակներով (վարչական ծախսեր, տարբեր շնորհային ծրագրերի իրականացում) օգտագործվող (ծախսվող) գումարը:

13. Դրամաշնորհներից եկամուտ և ծախս

Եկամուտներ

'000 դրամ	2024	2023
Ընդամենը, այդ թվում՝	4,744	19,407
• եկամուտներին վերաբերող շնորհներից, որից՝	4,744	19,407
Ծրագրերին վերաբերող շնորհներ	*4,744*	*19,407*

Ծախսեր

'000 դրամ	2024	2023
Ընդամենը, այդ թվում՝	(4,744)	(19,407)
- *Պր. Լ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ*		*(5,000)*
- *Հայաստանի Մխիթարյան կենտրոն հոգևոր մշակութային ՀԿ*		*(5,000)*
- *Զինվորի տուն ԲՀԿ*	*(21)*	*(4,979)*
- *Արեն Մեհրաբյան ԲՀ*		*(2,500)*
- *Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն ՀԿ*	*(573)*	*(1,928)*
- *Մասիսարայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ*	*(2,251)*	-
- *ԿՀՀՀ ՀԿ*	*(1,300)*	-
- *Արվեստարան կրթամշակութային ՀԿ*	*(599)*	-

14. Վարչական ծախսեր

Վարչական ծախսերը ամբողջությամբ վարչական անձնակազմի (տնօրեն և գլխավոր հաշվապահ) կարճաժամկետ հատուցումների (աշխատավարձի) գծով է:

15. Այլ եկամուտներ և ծախսեր

'000 դրամ	*2024*	*2023*
Այլ եկամուտներ (ծախսեր) ընդամենը, այդ թվում՝	**(973)**	**(1,045)**
• աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(600)	(600)
• մաշվածություն (ամորտիզացիա)	(137)	(146)
• գրասենյակային և այլ ծախսեր	(115)	(135)
• արժեզրկման պահուստից եկամուտ (ծախս)	(121)	(164)

16. Ֆինանսական եկամուտներ

'000 դրամ	*2024*	*2023*
Ֆինանսական եկամուտներ ընդամենը, այդ թվում՝	**39,537**	**41,536**
• կապակցված կողմերի գծով	39,537	41,536

Ֆինանսական եկամուտները ժամկետային ավանդի գծով տոկոսային եկամուտներն են (ծանոթ. 9):

17. Շահութահարկ

'000 դրամ	*2024*	*2023*
• **շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար**, այդ թվում՝	(6,572)	(7,049)
○ ընթացիկ հարկի գծով	(6,594)	(7,077)
○ հետաձգված հարկի գծով	22	28

'000 դրամ

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում	*2024*	*2023*
Հարկի կիրառվող դրույք	18%	18%
Շահույթը մինչև հարկումը	35,280	37,223
Չնվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	1,353	2,094
Հարկվող շահույթը	36,633	39,317
Ընթացիկ հարկ	6,594	7,077
Հարկի գործող միջին դրույքը	18.7%	19.0%

Հետաձգված հարկային ակտիվ

'000 դրամ	*Նվազեցվող (հանվող) ժամ. տարբերություն*	
	2024	*2023*
Ֆինանսական ակտիվներ	1,590	1,470
Աշխատավարձի և այլ կարճ.հատ. գծով պարտավորություն	16	15
Ընդամենը	**1,606**	**1,485**
Հարկի դրույքը	**18%**	**18%**
Հետաձգված հարկային ակտիվ	**289**	**267**

«Ֆինանսական ակտիվներ» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է ժամկետային ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գնահատումից:
«Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է աշխատակիցների կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով:
Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային զեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

18. Շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի դասակարգումը (վերլուծումը)՝ ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ

'000 դրամ	*Ծանոթ.*	*2024*	*2023*
Դրամաշնորհներից եկամուտ	13	4,744	19,407
Ֆինանսական եկամուտ	16	39,537	41,536
Աշխատավարձ և կարճ. այլ հատուցումներ		(3,272)	(3,260)
Այլ ծախսեր		(5,729)	(20,460)
Շահույթ մինչև հարկումը		***35,280***	***37,223***
Շահութահարկի գծով ծախս	16	(6,572)	(7,049)
Զուտ շահույթ		***28,708***	***30,174***

19. Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվներ *'000 դրամ*	*Մնացորդ* *31.12.2024թ.*	*Մնացորդ* *31.12.2023թ.*
Ընդամենը, այդ թվում՝	441,095	420,810
• ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	440,573	418,567
• դրամական միջոցներ	522	2,243

Ֆինանսական պարտավորություններ *'000 դրամ*	*Մնացորդ* *31.12.2024թ.*	*Մնացորդ* *31.12.2023թ.*
Ընդամենը	-	-

20. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

Պարտքային ռիսկ. Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված ներդրումային գործունեության (ավանդներ) հետ: Պարտքերի համար ապահովություն չի պահանջվում: Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ:
Իրացվելիության ռիսկ. Այն բանի ռիսկն է, որ Հիմնադրամը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Հիմնադրամը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը:
Շուկայական ռիսկ. Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է երեք տեսակի ռիսկ՝ արժութային ռիսկ, տոկոսադրույքային ռիսկ և այլ գնային ռիսկ:
Արժութային ռիսկ. Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:

Տոկոսադրույքային ռիսկ. Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի փոփոխությունները գլխավորապես ազդում են ներդրված ավանդների վրա՝ փոփոխելով կամ նրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիք): Ներդրված ավանդները ֆիքսված տոկոսադրույքով են:
Այլ գնային ռիսկ. Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից) արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով:
Այլ գնային ռիսկերի ազդեցությունը էական չէ:

21. Կապակցված կողմերի բացահայտումներ

Կապակցված կողմերի փոխհարաբերությունների բնույթը

Անվանումը	Բնույթը
Հիմնադիրներ	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ ՓԲԸ (ներկայումս ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ)
	Ֆրանսիական ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Էսէյ բանկ
	ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Ազգային ֆեդերացիա
	Սամսոն Գիշյան

Կապակցված կողմերի հետ գործարքներ. Հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամը կապակցված կողմ հանդիսացող ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ (ներկայումս ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ) բանկում տեղաբաշխել է ֆինանսական ակտիվներ՝ ժամկետային ավանդների տեսքով, որոնք մասնավորապես բացահայտվել են ծանոթ. 9-ում:

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ. Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2024թ. կազմել է 3,272 հազար դրամ և 2023թ.՝ 3,256 հազար դրամ (ծանոթ. 14): Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

22. Պայմանականություններ

Բիզնես միջավայր. Հիմնադրամը իր գործունեությունը իրականացնում է ՀՀ-ում, որը գտնվում է քաղաքական և տնտեսական փոփոխությունների փուլում: Չկան բիզնեսի և վերահսկողական այնպիսի զարգացած ենթակառուցվածքներ, ինչպիսիք կան ավելի հասուն շուկայական տնտեսություններում: Ավելին, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեությունը և վերջիններս ոչ միշտ են ճիշտ արտացոլում ֆինանսական գործիքների արժեքը: Հետագա տնտեսական աճի հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է և տարածաշրջանային անկայունությունը: Աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչն ազդում է համընդհանուր գնողունակության և պահանջարկի վրա:
2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում սկսվեց պատերազմ, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիր: Այն չի պահպանվում Ադրբեջանի կողմից: Ժամանակ առ ժամանակ Լեռնային Ղարաբաղի տարածքում, ինչպես նաև Հայաստանի սահմանային տարածքներում տեղի են ունենում զինված բախումներ: 2023թ. սեպտեմբերին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով Արցախի բնակչությունը բռնի տեղահանվել է ՀՀ: Ադրբեջանը օկուպացրել է Հայաստանի սուվերեն տարածքներ: Այս ամենը հանգեցրեց սոցիալական հուզումների, տարածքային և ոլորտային գործարարության նվազմանը և անորոշությանը բիզնես միջավայրում:
2022թ. փետրվարին սկսվել է ռուս-ուկրաինական ռազմական հակամարտություն, որի հետևանքով կան հազարավոր զոհեր, մի քանի միլիոն բնակչության տեղահանվել կամ տեղափոխվել բնակության այլ վայրեր, Ուկրաինայում տնտեսական գործունեությունը խաթարվել է, տնտեսությունը, ենթակառուցվածքները կրել են զգալի վնասներ: Ի պատասխան՝ բազմաթիվ երկրներ տնտեսական պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի (և որոշ դեպքերում՝ Բելառուսի) նկատմամբ: Բացի պատժամիջոցների սահմանումից, մեծ թվով խոշոր պետական և մասնավոր ընկերություններ հայտարարել են կամավոր գործողությունների մասին՝ Ռուսաստանի և Բելառուսի հետ բիզնես գործունեությունը սահմանափակելու համար: Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը և դրա հետ կապված իրադարձությունները տեղի են ունենում գլոբալ տնտեսական զգալի անորոշության և

անկայունության ժամանակաշրջանում, և հետևանքները, ամենայն հավանականությամբ, կազդեն և կվատթարացնեն ընթացիկ շուկայական պայմանները:
Վերոնշյալ հանգամանքների ամբողջական ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա գնահատել հնարավոր չէ, այնուամենայնիվ, ղեկավարությունը գտնում է, որ այս հանգամանքներն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսավորման, ինչպես նաև ընթացիկ գործունեության ու ծրագրերի իրականացման վրա: Այնուամենայնիվ, բիզնես միջավայրի ապագա փոփոխությունները կարող են տարբերվել Ղեկավարության գնահատումներից:
Ապահովագրություն. ՀՀ-ում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում: Ներմուծվում են զարգացած երկրներում վաղուց կիրառելի ապահովագրական գործիքներ:
Հաշվետու տարվա վերջի դրությամբ Հիմնադրամը իրականացրել է աշխատակիցների առողջության ապահովագրություն:
Քանի դեռ չի իրականացված ակտիվների ամբողջական ապահովագրություն, առկա է **ռիսկ**, որ որոշակի ակտիվների կորուստը **կամ ոչնչացումը** կարող է ունենալ բացասական ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:
Դատական հայցեր. 2024թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ, ինչպես նաև, մինչև այս հաշվետվության հաստատման ամսաթիվը, Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:
Երաշխիքներ. Չկան Հիմնադրամի կողմից տրամադրված և (կամ) ստացված երաշխիքներ:

23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Այլ ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2024թ) հետո մինչև վավերացման ամսաթիվը (30.04.2025թ.) ընկած ժամանակահատվածում:

24. Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2025թ. ապրիլի 30 ին՝ տնօրեն Աննա Գիշյանի կողմից:

Տնօրեն Աննա Գիշյան

Գլխավոր հաշվապահ Վահան Աբրահամյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.06.2025 16:08